

Տարեկան դիմել 10 րուր, կէս տարվան 6 րուր:

Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանագրատան մէջ:

Օտարադատարացի դիմում են ուղղակի

Тифлис. Редакция «Ммаск»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի եւ տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով:

Յայտարարութիւնները համար վճարում են

խրաքանչիւր թուին 2 կոպէկ:

ՄԱՍԿ

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Հայոց խնդիրը—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նա-
մակ Ախալցխայից: Նամակ երեանից: Ներքին
լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Միւստարա-
կան փոփոխութիւններ Ֆրանսիայի մէջ: Արտա-
քին լուրեր: ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Վասպուրականի
կենտրոնական վարժարան:

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

Եւրոպայիցները, որոնք այդքան մեծ նը-
շանակութիւն են տալիս ընդհանուր մարդ-
կային քաղաքակրթութեանը, մի՞թէ կամե-
նում են որ եւրոպան միայն վայելի այդ
քաղաքակրթութեան բարիքը, նա միայն
ունենայ կուլտուրայի արտօնութիւնը, իսկ
Ասիան երբեք չը քաղաքակրթվի և միայն
միշտ եւրոպայից կախված, եւրոպացիների
ստրուկ, ասիացիները միայն միշտ եւրոպա-
ցիների պարտական ծառաներ....

Այդպէս է երևում ինքն եւրոպացիները
ճշմարիտ, անկեղծ պաշտպաններ լինելին
ընդհանուր մարդկային քաղաքակրթութեան
տարածման, նրանք պէտք է ուրախ լինեն
որ Ասիայի խորքում գտնվեցաւ հայերի
պէս մի ազգութիւն, որ իր ցեղով իր ըն-
դունակութիւններով, իր հակումներով կա-
րող է ասիական այլ ցեղերի մէջ ներկայա-
ցուցիչ լինել եւրոպական լուսաւորութեան,
եւրոպայի և Ասիայի մէջ միջնորդ լինել:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՍՊԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱ- ՐԱՆ

«Միացեալ ընկերութիւնը» վանի վարժապետա-
նոցը փակելուց յետոյ, ինչպէս տեղեկացանք, անխ-
նամ չի թողնի այդ քաղաքի ուսումնարանական
գործը: Երբեք հայերի կը և վանի ազգ. երեց-
խանական ժողովը յատուկ խնդիրով դիմել են
սրբազան Ներսէս պատրիարքին և «Միացեալ
ընկերութեան» որ պ. փորձագիտական վերադա-
նայ վան և այնտեղ իր սկսած գործերը շարու-
նակէ: «Միացեալ ընկերութիւնը» այժմ իր վար-
ժապետանոցի մնացորդ գրքերը և իրեղէնները
յանձնել է պ. փորձագիտականին որ նորից գնում
է վան, տեղական ոյժերի օգնութեամբ սի կեն-
տրոնական վարժարան բանալու այնտեղ: Ներ-
սէս պատրիարքն էլ իր կողմից գիր է գրել վա-
նի նախագահին փաշային, որի մէջ գովեստով
խօսելով փորձագիտական աշխատութիւնների
մասին, խնդրում է յատկապէս որ իր պաշտպա-
նութիւնը չը խնայի նրան:

Մենք շատ անգամ յայտնել ենք այն միտքը
թէ հայաստանցիներ փոխանակ ամեն բան կ.
Պոլսից սպասելու, ուր Բօսփորի ափերում նըս-
տած բանաստեղծները պէս վարվում են և դեռ
չեն ճանաչի իրական Հայաստանը, լաւ կանն որ
տեղական ոյժեր կազմելով, բուն իսկ Հայաստա-
նի մէջ հաստատեն գործունէութեան կենտրոնը,
իսկ Թիֆլիս ու կ. Պոլիս և այլ տեղեր օգնեն
նրանց: Այդ միտքը իրագործվում է այժմ վանի
մէջ և մենք ուրախութեամբ համակրում ենք այս
նոր գործին: Բայց տեղական ոյժերը վանի մէջ
դեռ տկար են. նրանք հազիւ թէ պրծած հրդե-
հից, սովից և կոտորածից, դեռ նոր ուշքի են
գալիս և ուզում են աշխատել: Պարտաւոր ենք
օգնել նրանց ամեն միջոցներով որ չը թուլանան
իրանց առաջին քայլափոխում և չը յուսահա-
վեն:

ընդհանուր մարդկային քաղաքակրթութեան
նոյն իսկ այդ տեսակէտից եւրոպան,
եթէ ճշմարիտ անկեղծ բարեկամ լինէր քա-
ղաքակրթութեան, պէտք է շտապէր թիւր-
քաց Հայաստանին ինքնավարութիւն տալ,
չը նայելով որ հայերը, իրանց հայրենի-
քում շատ են, թէ քիչ են թուով, համե-
մատելով երկրի մահմետական ազգաբնակու-
թեան հետ: Հայերը Ասիայի եւրոպացիների
են և եթէ եւրոպան միմիայն իր նեղ, ա-
ռեւարական շահերը աչքի առջև չունենար,
բայց հասկանար լայն, ընդարձակ, ընդհա-
նուր մարդկային շահերը, նա պէտք է շտա-
պէր ազատել իր ցեղակից հայերին մօնղոլ-
ների, քաղաքակրթութեան այդ թշնամի
ցեղի, անտանելի բռնութիւնից:

Թիւրքերը աշխատում են ջնջել աշխա-
հիս երեսից աշխատող, քաղաքակրթու-
թեան ընդունակ հայ տարրը: Դրանից ում
կը հասնի ֆլաւս. ոչ թէ միայն հայերին,
բայց և ընդհանուր մարդկային քաղաքա-
կրթութեան գործին: Մի՞թէ եւրոպան այս
ճշմարտութիւնը չէ հասկանում: Իսկ ի՞նչ
օգուտ կուտուրայի գործին, եթէ ամբողջ
Ասիայում կը տիրէ մօնղոլական ցեղերի,
կամ մահմետականութեան ազդեցութիւնը,
որ երբեք չը թշնամի է լուսաւորութեան:

Մի՞թէ եւրոպային ֆլաւս է եթէ Ասիան
լուսաւորված լինի: Ընդհակառակը, եթէ
եւրոպացիներ իրանց և ընդհանուր մարդ-

կութեան շահերը հասկանային, պէտք է
փաղուց հասկանային որ Ասիան քաղաքա-
կրթվելով, եւրոպան էլ զրանից անպատ-
ճառ կը շահվի, թէ նրաթապէս և թէ բա-
րոյապէս: Իսկ այդ նպատակին հասնելու
համար պէտք է բարձրացնել Ասիայում եւ-
րոպական լուսաւորութիւնը իրացնելու ըն-
դունակ տարրերը: Եւ այդ տեսակ հազա-
դիւտ տարրերից մինը ասիական երկրինե-
րում՝ հայոց ազգութիւնն է:

Բայց այն անտրդարութեանը, որով վար-
վում են եւրոպացիները հայերի հետ, մա-
սամբ նպատած են և իրանք հայերը: Նը-
րանք իրանց բոլոր ձգտումների մէջ, իրանց
յարաբերութիւնների մէջ հայաստանցի միւս
ցեղերի հետ, չիմացան ամբողջ երկրի,
հայրենիքի բոլոր ազգութիւնների շահերը
միմեանց մէջ կապել: Հայաստանի թիւրք-
երկրագործը նոյնքան ճիշդված է կառավա-
րութեան պաշտօնեաների կամայականու-
թեամբ, նոյնքան հարստահարված է, որ-
քան նոյն երկրի հայ երկրագործը: Հայերը
չիմացան զրաւել Հայաստանի մահմետա-
կան ազգաբնակութեան համակրութիւնը
իրանց հայրենիքի վերանորոգութեան գոր-
ծի համար, չը հասկացան որ Բերլինի ա-
ւագածողութիւնը նրանք պէտք է խօսէին ոչ
թէ միայն հայերի, այն էլ միայն հայ-լու-
սաւորականները կողմից, այլ բոլոր հայաս-
տանցիների անունով, ինչ ցեղին ու կրօնին

և պատկանէին նրանք,—քրիստոնեայ թէ
մահմետական: Նրանք պէտք է խնդրէին
ինքնավարութիւն Հայաստանի համար և
ոչ թէ հայերի համար միայն:

Հայերը չիմացան էլ ուսում, լուսաւորու-
թիւն տարածել հայաստանցի թիւրք լա-
զաղ ազգաբնակութեան մէջ, չը կարողա-
ցան քաղաքակրթող ազդեցութիւն ունե-
նալ վայրերի քիւրդ ցեղերի վրա: Գոնէ ինչ
որ անցեկաներում չարեցին, այժմ սկսէին
անել այլ և այլ, լաւ կազմակերպված ըն-
կերութիւնների միջոցով: Թող անտեսական
միութիւնը հոգայ ոչ թէ միայն հայ, բայց
և մահմետական ազգաբնակութեան մա-
սին, այդպիսով բոլոր հայաստանցիների
անտեսական շահերը միմեանց մէջ կապելով:
Թող հայոց զարոյցները տարածեն լոյս ոչ
թէ միայն հայերի մէջ, այլ ընդունեն ի-
րանց սաների թուում և իրանց մահմետա-
կան եղբայրներին:

Այն ժամանակ եւրոպան կը տեսնի թէ
հայը Հայաստանում ճշմարիտ քաղաքա-
կրթիչ դեր է կատարում: Թէ հայը բա-
րոյապէս և նրաթապէս ճշմարիտ տէր է
Հայաստանում:

Այդպիսով հայոց խնդիրը ինքն իրան կը
վճռվի:

Գ. Ա.

Երկու տարի յառաջ հայի սովը տիրում էր
վանի մէջ, որի համար ամեն տեղից օգնութիւն-
ներ հասան Հայաստան: Այդ սովը էլ վերջացած
է: Բայց կայ մի ուրիշ սով, որ տիրում է միշտ
վանի մէջ և նրան դադարեցնելու համար էլ մեծ
օգնութիւններ հարկաւոր են այժմ: Մինչև այժմ
ամեն բանից պարզ երևում է, որ մարդ չը կայ
Հայաստանում. այդ երկրի մէջ սոսկալի կերպով
տիրում է մարդի սովը: Պէտք է աշխատել
որ դարգացած խեղճով գործող մարդիկ համենա
այնտեղ չուտով: Հէնց այդ միտքը ունի նաև
կենտրոնական վարժարանը որի կանոնադրի մէջ
գրված է հետեւեալ նպատակը: «Կենտրոնական
վարժարանի նպատակն է դարգացած խեղճով,
աղիւս սրտով և առողջ մարմնով մարդեր հա-
ցունել երկրին և ազգին համար»:

Մենք առիթ ունեցանք աչքէ անցունել Վաս-
պուրականի կենտրոնական վարժարանի կանոնա-
գիրը և ուսումնական պրոգրամման որ պատրաս-
տված է տեղական պէտքերի համեմատ: Վար-
ժարանը երկու մասի է բաժնվում. նախա կը-
թարան, որ կազմվում է պատրաստական երկու
գիտականութիւններից և ուսումնական արան
նայ չորս դասարան: Կենտրոնական վարժարանը
ունի գրեթէ մի միջնակարգ ուսումնարանի պրոգ-
րամման, Նախակրթարանում ընդունվում են թէ
արական և թէ իգական սեռից աշակերտներ, մին-
չև 13 տարեկան. բայց ուսումնականումը՝ արա-
կան սեռից միայն: Երկու սեռին էլ դասախօս-
վում են հայրենագիտութիւն, կրօն, հայերէն
լեզու, պատմութիւն, աշխարհագրութիւն, չափա-
կան և բնական գիտութիւններ, գեղագիտութիւն,
գծագրութիւն, երգ և ծարմամարդ: Օրիորդների
համար մասնաւորապէս, տնական կառավարու-
թիւն և ձեռագործ: Արական սեռի աշակերտնե-
րի համար մասնաւորապէս, ֆրանսերէն, թուր-
քերէն և քուրդերէն լեզուներ, տեսական հետ
խառն գործնական դասեր հողագործութիւնից,
երկաթագործութեան և հիւնութեան արհեստնե-
րին վերաբերեալ դասընթաց: Այս բոլոր լեզու-
ները և առարկաները պարտաւորի են աշակերտ-
ների համար: Ցանկացողները կարող են նաև

անգլիերէն լեզուից դասեր առնել, ուսումնարա-
նի Բ. դասաւանդից սկսած: Ուսուցիչ լեզուից
դասեր, ուսումնարանի Գ. դասաւանդից սկսած:
Այս երկու լեզուների ուսումը կամաւոր է միայն
և ոչ թէ պարտաւոր: Բայց քուրդերէնը, թուր-
քերէնի և ֆրանսերէնի նման պարտաւորիչ կը
է ուսումնարանում, որովհետեւ տեղական լեզու-
ներից մին է: Հայերը միշտ յարաբերութեան մէջ
են լինում քուրդերի հետ առեւտրական և այլ
պատճառներով. նրանք հետ կապված են իրեն
հարկան ժողովուրդը:

«Վասպուրականի կենտրոնական վարժարանը»
ստանում է միջազգային մի դիրք. այնտեղ ըն-
դունվում են և ասորիներից, եղիզներից, քուր-
դերից և թիւրքերից աշակերտներ եթէ նրանք
համաձայնվում են սովորել հայերէն լեզուն: Ա-
շակերտները ընդունվում են թոշակով, թէ դի-
չերթով և թէ ցեղեկայ. իգական սեռից դե-
րեկայ աշակերտներ միայն ընդունվում են:
Ցեղեկայ աշակերտը պարտաւոր է թոշակ վը-
ճարել տարեկան 55 րուր: Դասաւանդը և այլ
զարգացական պէտքերը կը տրվին նրան վարժա-
րանէն: Գիշերօթիկ աշակերտը պարտաւոր է վը-
ճարել տարեկան 250 րուր, որի փոխարէն
վարժարանի տեսչութիւնը հոգս կը տանի նրա
սնունդին, հագուստին, բնակութեան, մաքրու-
թեան, դասադիրքերին և ուսումնական պէտ-
քերին: Այս ցանկը, ինչպէս երևում է, շատ է-
ծան են մի այնպիսի վարժարանի համար, որ
իր ստանալից թոշակներով միայն պիտի կա-
ռավարվի. բայց որովհետեւ վանիցիների մեծ մա-
սը շատ աղքատ դուրսիւն մէջ են գտնվում և
այդ գումարները մեծ են երևում նրանց, հա-
րուստների տղաները միայն կը մտնեն այդ
վարժարանը և աղքատները կը գրվին եթէ աղ-
քատէր բարեբարներ չօգնեն նրանց նուիրաւորու-
թիւններով:

Հրաւիրում ենք ուրեմն ամեն ազգապէսներին
օգնել այդ վարժարանին և չը թողնել որ Հա-
յաստանի մէջ նոր կազմվող տեղական ոյժերը
փչանան և սպառվեն: Հրաւիրում ենք մարդիկ
հասցնել վանի մէջ, օգնել այնտեղի աղքատ

ուսանողներին և չը թողնել նրանց ուսումից
զուրկ: Տարեկան 250 րուր միայն վճարելով,
մարդ կարող է մի գիւղացի տղայ, որ և է աղ-
ղից, իր գիշերօթիկ աշակերտ որդեգիր ունե-
նալ վանի կենտրոնական վարժարանում կամ
թէ տարեկան 55 րուր միայն վճարելով, մի
քաղաքացի աղքատ աշակերտ (օրիորդ կամ տը-
ղա) իր ցեղեկայ աշակերտ, որդեգիր ու-
նենալ այնտեղ: Ով ուզում է կարող է, սրանից
էլ պակաս, իր ուղած չափով մի գումար նուի-
րել, կենտրոնական վարժարանին գիշերօթիկ կամ
ցեղեկայ աշակերտ տալու նպատակով, և երբ
այդ նուէրներ հետգնեւ պահվելով «Մշակի»
խմբագրատունը, նուիրատուների նպատակին
համեմատ աշակերտ տալու չափ փող գոյնայ,
իսկայն կուղարկվի վան: Հարկ եղած միջոցնե-
րը ձեռք առել ենք արդէն ապահովապէս փո-
ղիւր ուղարկելու համար վան: «Մշակի» մէջ
կը հրատարակվեն այս նպատակով մեղ հասց-
րած նուէրների քանակութիւնը, նուիրատունե-
րի և ընդունված որդեգիրների անունները:

Յոյս ունենք որ մեր այս հրաւերը շուտով
արձագանք կը գտնի և վանում նոր կազմվող
թարմ ոյժերը կը քաջալերվեն: Նրանք պէտք է
կարողանան այժմէն մրցել եղիւթաների հետ, որք
կեկել են վան, իր թէ Հայաստանի մէջ կըր-
թութիւն տարածելու նպատակով և աշխատում
են հայերից աշակերտներ որսալ իրանց վարժա-
րանի համար, ձրի կըրթութիւն և մինչև անգամ
փող էլ տալով: Մենք թիւրքաց Հայաստանից
հեռի ապրում ենք այստեղ հանգիստ, իսկ մեր
արիւնակից եղբայրները նիւթական և բարոյա-
կան չարաբանքների մէջ, յամառութեամբ մը-
նում են այնտեղ և պահպանում են Հայաստան
անունը: Չը թողնենք գոնէ որ նրանց ազգու-
թեան օգին իր վերջին շունչը փչի եղիւթաների
ձանկերում: Օգնենք վասպուրականի կրթական
գործին. օգնենք նրա կենտրոնական վարժարա-
նին:

Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՌԱՅԻԱՅԻՑ

Հոկտեմբերի 23

Հաշտատեսական ժողովը շատ չարաբանական, բայց վանդանի մասը մուծելով թղթերից չը կարողացաւ մի բան հասկանալ, կամ որ և ինչէ մի հաշիւ կազմելու Այդ պատճառով մի բանի անգամ հրախրից պ. Թովմանէս վանդանին, որ զայ և ինքը թղթերը կարգաւորէ և հաշիւ պատրաստէ, բայց վանդանը առանց ուշադրութիւն դարձնելու հաշտատեսականի հրաւերին չը ներկայացաւ, և մինչև այսօր փախուած է հաշիւ տալուց: Հաշտատեսական ժողովը ուրիշ միջոց չունենալով այս յուսանաւորութիւնից դուրս գալու, դիմեց հոգևոր իշխանութեան օգնութեանը:

Մինչև հոգևոր իշխանութեանց պատասխան տալու, հաշտատեսական ժողովը հոգևոր կառավարութեան անդամներին և սրբազան յովորդի ներկայութեամբ սկսեց քննել ս. Փրկիչ եկեղեցու աւագ պահարանը, որովհետեւ այդտեղ են պահուած բոլոր եկեղեցական սրբազան իրերը, և այդ պահարանն էլ վանդանին էր յանձնարած առանձին ցուցակով:

Պէտք է ասած, որ Ախալքալայի ս. Փրկիչ եկեղեցին, ս. Էջմիածնից յետոյ, կարելի է ամենահարուստը համարել իր յովանոսի ուրիշ հայ եկեղեցիներին հետեւելով: Միայն արծաթեղէնների քարշը հասնում է մինչ 16 պուղի: Այդ եկեղեցւում են հաւաքւած կարնոյ նահանգի հայ եկեղեցիների հարստութիւնները, որ զողովականները բերին Ախալքալայ, կարապետ արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ: Վժռուր է այստեղ մի առ մի յիշել բազմաթիւ դրամալի մազադաթիւս աւետարանները, աստուածաշունչները, այսմատուրքները և այլ գարմանալի հնութիւնները, որոնք կարող էին առատ նիւթ լինել թիֆլիսի հնագիտական ժողովին: Եթէ Ախալքալայ և ուրիշ քաղաքների նման բազմ ունենար այդ գիտական պիտանքների ուշադրութեան արժանանալու: Բայց ինչ արած, որ հայերիս բնական յատկութիւնն է պարծնել օտարների առաջ մեր ունեցածով, իսկ մենք ընդունակութիւն չունենք նրանց հետ վարվել ինչպէս որ պէտք է:

Ինչպէս վերոնշյալ ասացինք, այդ պահարանը յանձնարած էր վանդանին, այս վերջինս էլ յանձնել էր Արքանու քահանայ Վաղագեանին, և սրա համար պ. վանդանը, հակառակ հոգևոր կառավարութիւնից ստացած հրամանին, ոչ մի անգամ ներկայ չը գտնվեցաւ պահարանի քննութեան ժամանակ և բոլոր պատասխանատուութիւնը գցեց Արքանու քահանայ Վաղագեանի վրա: Հինգ տարի է, որ յիշալ քահանան է կառավարում այդ պահարանը և չենք կարծում թէ այդ հինգ տարւոյ մէջ գոնէ մի անգամ կատարաւորած է մաքրած լինի: Խոջալի է տեսնել և այս բոլորի թէ ինչ անշուք վիճակում են գտնվում վերոյիշեալ պատկառելի հնութիւնները: Ամենքն էլ դէս ու դէն խառնիխառ վեր ածած, ծածկված անկարգութիւն փոշով, ախպէս որ շատ ուխտաւորների ստիպւած են իրանց թաշկինակներով մաքրել համբարները ժամանակ: Զարմանում ենք Արքանու քահանայի վրէժը: Ինչ որ ինքն էլ ամեն ուխտաւորից իր բաժինն է ստանում, իս օրի չէ ծառայում, որ այսպէս բարձի թողի է արել յիշալ պահարանը:

Հաշտատեսական ժողովը նախ և առաջ քննեց այն իրերը, որ ստացել էր հայր Վաղագեանը առանձին ցուցակով: Այդ քննութեան հետևանքի մասին խօսել ուրիշ անգամի թողնելով, առայժմ հարկաւոր եմ համարում ուշադրութեան առնուլ հետեւեալ հանգամանքը:

Այդ պահարանն էլ մի առանձին եկամուտի աղբիւր է մեր եկեղեցիների համար թէ նոյն պահարանում գրված գանձանակներից և թէ սրբոց մատուցների համար ժողովրդից ստացված ընծայաբերութիւններից: Այդ ընծայաբերութիւնները լինում են զանազան տեսակ, այսինքն ոսկեայ և արծաթեայ խաչեր, մատանիներ, տաճակաւն ոսկի դրամներ (ուսուպեայ, քանոնոց և այլն, որ առհասարակ Ախալքալայի հայ կանայք պոկելով իրանց դարբերից նուրբում են սրբոց մատուցներին, կամ պատկերներին) կերպասեղէններ, մէկ խօսքով ինչ որ կարելի է ընծայել եկեղեցուն: Այս ամենը հոգևոր կառավարու-

թեան բառերով կոչվում են «յաւելեալ իրեր»: Նախկին տարիներում այդ յաւելեալ իրերը ներքին համար, իւրաքանչիւր եկեղեցու մէջ արվում էր վաւերացած ցուցակ, և այդ ցուցակի մէջ գրվում էր թէ ընծայված առարկան և թէ ընծայողի անունը և տարվայ վերջը այդ իրերը ներքին հաւաքում էին ս. Փրկիչ եկեղեցու պահարանը և ապա հոգևոր կառավարութեան, երեցիկների և մի քանի անձանց գիտութեամբ այդ իրերը ներքին միջոց շնորհով նշանաւորները անցկացնում էին մայր մատենանի մէջ, իսկ աւելուրդները վաճառում էին յօգուտ եկեղեցուն: Այս հինգ տարվայ ընթացքում չերեցաւ այդ պիտի ցուցակ, բացի մի քանի կտոր թղթերից, որոնց վրա հայր Վաղագեանը այնքան է նշանակել, ինչքան որ իրան ձեռնառն է եղել: 1879 թուականում աւելացած իրերը ներքին ցուցակ ամենին չը կայ. ո՞վ կարող է իմանալ թէ այդ թուականում ինչքան ընծայաբերութիւններ են եղել մեր երեք եկեղեցիներում: Այնու ամենայնիւ երբ հաշտատեսական ժողովը պահանջեց նրանից իր ցուցակ տուածի համաձայն ոսկի խաչեր, մատանիներ, դրամներ և այլն, պատուելի քահանան պատասխանեց, որ այդ ամենը յանձնել է երեցիկության վանդանին, բայց մոռացմամբ նրանից ստացական չէ առել, այն էլ հինգ տարվայ ընթացքում: Վրացե աւելուրդ լինի երկար գրել այս մասին, այսքան ասենք թէ ինչպէս որ վանդանին էր վարվել եկեղեցական կայքերի հետ, նոյն ձևն է բռնած և հայր Վաղագեանը պահարանի վերաբերութեամբ կարծես այդ երկուսը միմեանց մէջ խորհուրդ արած լինէին: Անցած անցել է, պէտք է աշխատել, որ այսուհետև այդպիսի խայտառակութիւններ չը պատահեն և իմ կարծիքով դրանց առաջն առնելու համար անուշտ հարկաւոր է դնել իւրաքանչիւր եկեղեցում ժապաւնած ստացականների գրքեր և պատուիրել ժողովրդից, որ ընծայաբերութիւն արած ժամանակ ապագաւառ պահանջին ստացականներ: Թէ սրբազան Սաղիւնեանցի և թէ Ախալքալայի հայ հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրում ենք այս բանի վրա:

Հ. Վ. Գ.

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ

20 Հոկտեմբերի

Երևանում ամենայն բաւականութեամբ կարգավիճակ «Մշակի» յօդուածները Էջմիածնի համարանի վերաբերութեամբ: Թէ և խաւարամիտների բռնել կաշվից դուրս է գալիս հակառակը ապացուցելու համար, ջանաւոր է լինում «Մշակի» ասածները ջրել, բայց արդէն ուշ է. էլ չեն կարող ընթերցողներին մոլորեցնել... Մենք երևանցիներս— մօտ ենք Էջմիածնի համարանին. մենք լաւ գիտենք թէ որքան էլ չլիջ սկզբունքներ հնարեն, այնու ամենայնիւ չեն կարող ծածկել այն որ աղնիւ չէ, չնորհալարութեան արժանի համարել այն, որ վնասակար է, որ խորամանկութիւն է... Թող որքան կամին ճշմարտեքաբաններ տակ աշխատեն ծածկել ճշմարտութիւնը. մենք թողնում ենք այդ ամբողջ մի կողմ և դառնում ենք բանիմաց ընթերցողներին:

Թող ուրիշները ինչ կուզեն—ասեն. մենք կասենք այն— և կախատենք ապացուցել— ինչ որ ճշմարտան է. ինչ որ լսել ենք մեր ականջով այդ քայլը անողի բերանից, ինչ որ պարզ եզրափակել է իրողութիւններից: Մի որ և ինչ Նահապետեանին 5700 ռ. (700 ռ. ճանապարհաժախի հետ) և ուրիշներին էլ 4000—3000 ռ. ռոճիկ տալը «յան և արծ» ստեղծվեց և այն ժամանակ—երբ ճգնաժամ կարելի էր անուանել Մանկուհու համար, այն ժամանակ երբ մամուլը ամեն կողմից աղաղակեց նրա արածների դէմ, երբ կանչում էր աղաղակներին, հրաւիրում էր նրանց գալ խմբվել Էջմիածնի, միաբան եպիսկոպոսներից հաշիւ պահանջելու: Այդ ժամանակ միայն Մանկուհին հնարեց այդ զգուշութիւնը և ուղղակի նրա համար, որ թէ գրգռված հասարակութեանը և թէ մամուլին տայ խօսելու, խորհելու և զբաղվելու մի այնպիսի նիւթ, որ պահ մի մոռանան հարկաւոր տիրացուները, ոսկեկուռ մատանիները, անդամանդները, խաչերը, շուրջաւորները, պարզաբանալութիւնները և այլ հազար ու մի տեսակ գործերը:

Ձգտում են համոզել, որ Էջմիածնի համարանը հարուստ է, ապահովված է, (ուրիշն թող միա-

մտովի աղղը, որ նուրբած կօպէկն անգամ չէ կորած), և այս տարի առաջին քայլն է անում յաւաքողութեան—ուսուցիչներին մեծ ռոճիկներ տալով: Դրանք թող ի նկատի ունենան հետեւալը: Մենք ինքներս անձամբ տեսնեք Էջմիածնի տպարանում «Ընկալագիր» վերնագրով տոմսակներ—հեմարանին 10—25 ռ. տարեկան միանուագ նուէրներ տալու համար: Հետաքրքրվեցինք և իմացանք, որ հեմարանի այս տարվայ ծախքերը լցնելու համար եկամուտից պակասում է 20,000 ռ.: Ահա այդ պակասը լրացնելու համար է, որ ստեղծել է Մանկուհին այդ «Ընկալագիր» դարձեալ խեղճ ժողովրդին դիմելու— ժողովրդի վրա տարածելու դիտաւորութեամբ, իսկ եթէ աղղայինք չը տան, հեմարանի դրամազլից պիտի լրացնի պակասը: Ուրեմն հեմարանը իր կարողութիւնից վեր ծախսեր անելով՝ առաջին քայլն արեց իր դռները փակելու և հա՛ա թէ ինչու: Նա բարձրացնելով միանգամայն ուսուցիչների ռոճիկը, այսուհետև այլ ևս չէ կարող պակասացնել, իսկ այդքան էլ վճարելու միջոց չունի: Ամեն հասարակութեան իր անապահով դպրոցն ունի, նրան էլ է պարտական: Հեմարանը պահելու համար պէտք է արդիւն փակել—ջնջել միւս դպրոցները: Ուրեմն ինչ եղք է մնացել: Եւթի համար շատ երկար մտածելիք չունի նրա այժմեան հոգաւոր Մանկուհին. նրա դէվիդն է «մեզից յետոյ թող ջրհեղեղ լինի»: Հետագայէն նա մտածում է միայն եղած չեղածը իրան օրով գործ դնել, ամեն բան չալլու ու չընդ անել, որ իրանից յետոյ ամեն բան կործանվի և այդպիսով իբր թէ իրան օրերը ոսկէ դար համարվեն, անմոռաց մնան:

Գանք ուրիշ կէտերին. Էջմիածնի հեմարանը այսօր ոյժ ունենալով դիցուք ինչու է ուրիշ դպրոցների եկամուտը, եւթադրեք թէ, և նրանց արժանաւոր տեսուէրներ: Սրանով չէ հարուստանալ արեւոք մեր միւս դպրոցներին: Հեմարանը տարեկան մօտ 70—80,000 ռուբլի վաճառելով, ինչ օգուտ է տալիս և ինչ օգուտ կարող է տալ աղղին: Նրա մէջ աւարտածները ինչ ուղղութեան, ինչ հանձնարի, ինչ հասկացողութեան տէր անձինք պիտի լինեն,—չէ որ, ինչքան էլ բարձր լինեն, իրանց ուսուցիչներից բարձր չեն լինի և վերջապէս տարեկան քանի հոգի կարող են աւարտել, որ օգուտը համեմատ լինի այն անպիտանութեան հետ:

Այս 80,000 մանէթով տարեկան 150—160 հոգի կարելի է պահել արտասահմանի զանազան դպրոցներում, որտեղից դուրս կը գան, ոչ թէ Նահապետեանի թէկտորութեան տակ եղած աշակերտներ, այլ և դուրս Նահապետեանի պէսներին տեսուէրներ անող անհատներ: Հեմարանը իր հիմնված օրից մինչև այսօր, ինչ էք կարծում,— որքան տառնակ հազարներ վաճառած կը լինի և որքան ուսումնաւարտ աշակերտներ տուած կը լինի: Ահա արդէն ինքներով տարին էր որ գոյութիւն ունի հեմարանը, եթէ եւթադրենք միջին թիւով 20,000 ռ. տարեկան ծախս անցեալ ժամանակներում,— կանէ 180,000 ռ. և այս անգին դուրսը ինչ է տուել ժողովրդին... Հա՛, դեռ յետոյ պիտի տայ—լսա՛: Տեսնեք:

Վրոյր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Կարդացինք «Մեղու Հայաստանի» լրագրում մի լուր Վաղարշապատից, որ Բաղդուղիմոս վարդապետ Վերդեան աքսորված է Խորվիթապ: Բայց մեզ հաղորդում են նոյն տեղից մի լուր, որից եզրակացնում ենք որ «Մեղուի» թղթակցի յայտնած լուրը ստույգ չէ: Մեզ գրում են որ Բաղդուղիմոս վարդապետ թէպէտ և Էջմիածնում չէ, բայց և Խորվիթապում էլ չէ:

«Одесский Листок» լրագրում կարդում ենք, որ այս օրերս Օդեսայում քննվեցաւ դատարանում մի շատ զարմանալի գործ: Մի կին, հասարակ ժողովրդից, մեղադրվում էր նրանում, որ թողնելով իր մարդուն, առանց ապահարզան ստանալուց պակսվեցաւ մի այլ մարդու հետ: Դատարանը քննելով այդ վարձուքի շարժառիթները, արդարացից կնոջը:

Երեւանի մէջ, վաճառ քահանայ Տէր-Յովհաննէսեանց խնդրում է մեզ տպել հետեւալը: «Աղղօգուտ լրագրից 148 համարի մէջ պ. Նորայրը

ի միջի այլոց, չեղվելով ճշմարտութենից, յարձակվում է իմ պատիւ դէմ, գրելով որպէս թէ՛ «հասկացող նորգեցիկներից ոմանց յարաբերութիւնը փոխվել է դէպի տէր վաճառ հայրը, իմ դէմ այս գրած տողերին ես կը պատասխանեմ հետեւալը: Ամեն մի անձ կատար իր շրջապատողներից երբ ապրիլնութիւն է գործել, երբ մեղանչել է հասարակագուտ գործի դէմ, երբ անարդ ընթացք է ունեցել, երբ իր պարտականութիւնների մէջ ծոյլ է հանդիսացել և այլն, Արեւոք որ յանցանքիս, որ անվայել պաշտօնաւարութեանս, կամ արարածներս համար Նորգի բնակիչները փոխել են իրանց յարաբերութիւնը դէպի իմ անձնաւորութիւնը: Թող ցոյց տայ պ. Նորայրը, Ընդհակառակն, որքան նկատում եմ, ժողովուրդը սերտ սիրով կապված է միւսմ ինձ հետ, որովհետև որպէս կարողութիւնս եղել է, միշտ աշխատել եմ սրբութեամբ կատարել քահանայական և ուսուցչական պարտականութիւններս, ժամանակի պահանջմունքներին համաձայն և միշտ ցանկացել եմ սիրելի ժողովրդին առաջադիմութեան և բարոյական ու մտաւոր կրթութիւն: Այդ բոլորը կարող են վկայել ոչ թէ միայն նորգեցիկները, այլ քաղաքիս այլ թաղերի բնակիչներից շատերը, որոնց լաւ ծանօթ են Նորգի դրութեան անցեալ և ներկայ հանգամանքները»:

Մեզ հաղորդում են Մեղրի գեղից թէ այս օրերս թուրք աւաղակներ, որոնցից մինին արդէն կաւանաւորեցին, սպանեցին Մեղրի-Օրդու-բաղեան ճանապարհի Շահ-Վաչ անուանված կիրճում երկու հայ զիւղապետներ, որոնք Օրդուբաղից դառնում էին դէպի տուն, իրանց վաճառած ոչխարների փողերը իրանց հետ բերելով: Սրանցից մէկին սպանեցին հրացանով, իսկ միւսին դաշնով:

Երեւանի մէջ գրում են: «Տեղիս երիտասարդները պատրաստվում են մի հայոց ներկայացում տալ յօգուտ «Ժողովուրդի» լրագրի: Բայց ինչ անեք, որ սիրողների ներկայացման եկողներից շատերը փողեր չեն վճարում: Եթէ սիրողները իբրեւ քաղաքավարութիւն, վաղորձաւ տոմսակները չուղարկեն առանձնապէս, հաւատացած կարող էք լինել որ մի հատ տոմսակ անգամ չի ծախվի: Իսկ երբ նրանց ուղարկվում են տոմսակներ, այն ժամանակ ինչպէս սիրողները պատմում են, նրանց յետ էր դարձնում այդ տոմսակները, զանազան հայհոյանքներով լի նամակներով միապին: Եթէ այդ վայրենի վարմունքը դէպի աղղային թատրոնը շարունակվի, այլ ևս ոչ ոք չի համաձայնվի բնմ դուրս գալ իբրեւ սիրող, մասնաւոր մեր տիկիներից և օրիորդներից»:

Մայրաքաղաքի լրագրից հաղորդում են որ ուսու երեւելի վրպասան Տուրքենիով պատրաստում է տպագրութեան համար մի նոր բոման Ռուսաստանի ներկայ հասարակական կիսնքից:

Երկու երիտասարդներ խնդրում են մեզ տպել հետեւալը, չի տեղեկութիւն մեր գրականութեամբ պարագիւր անձանց յայտնում ենք, որ մենք արդէն թարգմանել ենք «Жизнь Тома Едварда» մանկական վէպը, որ չուտով մամուլի տակ կը մտնի:

Կ. Պոլսից մեզ գրում են, խնդրելով մեզ որ բաց անենք մեր լրագրի էջերում հանդիմանկութիւն Երուսաղէմի հայոց վանքի համար, որ ահապիս պարտքերի մէջ է ընկած: Զարմանալի բան, այդքան հարուստ վանք և միշտ պարտքերի մէջ ընկած: Բայց դժբաղդաբար պէտք է խոստովանվենք յիշեալ նպատակի համար հանգանակութիւն առաջարկողներին, որ մենք «Մեղուի» էջերում վանքերի համար սովորութիւն չունենք հանգանակութիւններ անելու, մանաւանդ երբ վանքը Հայաստանի հողի վրա էլ չէ գտնվում, որ կարողանար անմիջական օգուտ տալ իրան շրջապատող աղղաբանութեանը, կամ նիւթապէս նրան օգնելով, կամ դպրոց հիմնելով և այլն:

Նոյն թիւի մէջ գրում են: «Մեր հոգևոր ուսումնասիրանք, որ ամբողջ իմաստով միակ ուսումնասիրան է շատ ողորմելի դրութեան մէջ է գտնվում թէ նիւթական և թէ ուսումնական կողմից, նորհիւ անգործ, թող հոգաբարձուներ ի անգետ ուսուցիչներ: Հայերի մեծ մասը, այդ պատճառով, տալիս են իրանց զաւակներին ուսնաց ուսումնասիրան, որ արագ քայլերով առաջ է դնում և վերք ի շատէ քաղաքացած ուսումնասիրանի է տալիս հասարակութեանը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՆԻՍՏՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ՖԲԱՆ-
ՍԻԱՅԻ ՄԵՋ

Վերջին տաս տարիների ընթացքում տաս երեք զանազան մինիստրութիւններ կառավարել են Ֆրանսիան և նրանցից ոչ մէկը մի նշանաւոր հետք չէ թողել երկրի հասարակական համակրութեան վրա: Մինիստրները մէկը միւսի ետեւից ասպարէզ էին դուրս գալիս և անհետանում էին: Հարկւրից աւելի մինիստրներ կազմել են այն կառավարութիւնները, որոնց առաջնորդել են չափաւոր և պահպանողական կուսակցութեան ամենանշանաւոր անդամները: Հանրապետութեան նշանաւոր գործիչների մեծամասնութիւնը փորձել է իր ոյժերը մինիստրական փշոտ ասպարէզի վրա: Մնում է միայն արմատականների մի աննշան խումբը, որի անդամներից մէկը մի փոքր ժամանակ առաջ Գամբետային էլ էին համարում: Վերջին ընտրութիւնների ժամանակ բաւական ուժեղացած այդ խումբն էլ իր կողմից պատրաստվում է բռնել պաշտօնական անշնորհակալ տեղերը, որոնց տակ թաղված են բաւական շատ նշանաւոր մարդիկ: Մինիստրական պաշտօնը, որ երկրորդական գործիչների փառասիրութեան առարկան է, երկիւղալի է հեղինակութիւն ունեցող և տաղանդաւոր պարլամենտական առաջնորդի համար: Մինիստր դառնալը նշանակում է զոհել իր անունը և դրութիւնը զանազան պատահարների, ճարտարախօս ընդդիմադրականների յարձակմունքների առարկայ դառնալ, պատասխանատու լինել ընդհանուր գործերի անաջող ընթացքի համար և վերջապէս կորած մարդ լինել հասարակական հեղինակութեան և ժողովրդականութեան տեսակէտից: Ահա հենց այդ պատճառով հանրապետական նշանաւոր գործիչները հեռու էին մնում մինիստրական պաշտօնից, որի արտաքին և ժամանակաւոր փայլը անկարելի է դարձնում քաղաքական իսկական փառքը: Այդ պատճառով Գամբետան էլ մինչև այժմ չէր կամենում անդամակցել կառավարութեանը, մինիստրի պաշտօն ընդունելու էր աւելի լաւ: Եր համարում վայելել երկրի հանրապետական կուսակցութեան առաջնորդի հեղինակութիւնը և ազդեցութիւնը:

Հասարակական անդադար փոփոխող տրամադրութեանց կախված այդ մինիստրութիւնները գուցէ աւելի էլ կարճատև լինէին, եթէ նրանք կախումն ունենային մի մարդու ցանկութիւններից և կապրիզներից: Մի և նոյն ժամանակ անհերք է, որ հասարակութիւնը աւելի հեշտութեամբ երես է դարձնում իր ներկայացուցիչներից և սիրելիներից, քան թէ մի անհատ իր սովորական հաւատարիմ ծառաներից, եթէ մինչև անգամ վերջինների հաւատարմութիւնը կապված լինէր ժողովուրդը բացարձակ կողմակցութեամբ: Հետ, ինչպէս այդ լինում էր Նապոլէոն III-ի ժամանակ: Ամբողջ հասարակութիւնը չէ կարող ունենալ անձնական թուրութիւններ և սովորութիւններ այս կամ այն պետական մարդու վերաբերութեամբ: Հասարակութիւնը այսօր անհնայ հարուածում է իր երէկվայ սիրելիների, հենց որ նրանց ազնուութիւնը կամ ընդունակութիւնը կասկածելի է դառնում: Ժիւլ Գարբիի մինիստրութիւնը դեռ երկար ժամանակ կարող էր գոյութիւն ունենալ Գարբիի միջոցով, եթէ նրա վիճակը կախված լինէր Գարբիից և մինչև անգամ Գամբետայից: Այժմ մինիստրութեան անդամ

ները վայելում են հանրապետութեան նախագահի անձնական բարեկամութիւնը և նրանց քաղաքական ուղղութիւնը կատարելապէս համապատասխանում է նրա հայեացքներին: Այժմ մինիստրներից մի քանիսը Գամբետայի մօտ կողմնակիցներից են: Պարլամենտական մեծամասնութիւնը վերջին ընտրութիւններից յետոյ գրեթէ նոյնն է մնացել, մինիստրութեան դրութիւնը պառակտւորների ժողովի առաջ շատ քիչ է փոխվել: Այնու ամենայնիւ Գարբիի մինիստրութեան դատավճիռը կայացած է և նոր մինիստրութեան կազմելը անհրաժեշտ և անփախելի է համարվում:

Ի՞նչ է պատճառը, որ Ֆրանսիական կառավարչական նշանաւոր անձանց դրութիւնը այդքան փոփոխական և անհաստատ է: Ամենից առաջ այդ պատճառներից մէկը քննող և հսկող հասարակութեան յոյսերի ի դերը անցնելն է: Գիտակցական քաղաքական կեանքով ապրող ժողովուրդը իրաւացի է համարում լուսացնել և կատարելազօրել իր կառավարութիւնը: Լաւ վարչութիւն ունենալով, այդպիսի ժողովուրդը աշխատում է աւելի լաւ ունենալ: Ազնիւ մինիստրներ ունենալով, նա աշխատում է աւելի ընդունակները ունենալ, ընդարձակ ասպարէզ տալով իր ամենալաւ գործիչներին ազգասիրական մրցման համար: Ընթացող քաղաքական գործերը լաւ չը կարգաւորող գործիչները հեռացնում են քաղաքական ասպարէզից, որպէս զի ճանապարհ տան աւելի թաւալ, հասարակութեան լոյսը իր վրա դրած ոյժերին, որոնք նոյնպէս կառուցում են անընդունակ յայտնվել: Առաջնորդող անձանց անընդհատ փոփոխութիւնը կառավարութիւնը ընդհանուր ձգտմանը զեպի մարդկային գործերի կատարելութիւնը: Մինիստրների յաճախակի փոփոխութիւնները չեն ազդում իշխանութեան հաստատութեան և նրա պահպանողական ոյժի վրա:

Կարելի էր մտածել, որ մինիստրութեան հաստատութիւնը կախված է զլխաւորապէս նրա առաջնորդի տաղանդից և եռանդից և որ Գամբետային նման ամենից անաշխատ հեղինակութիւն ունեցող պետական մարդը պէտք է իր կառավարութիւնը այնքան յարատև դարձնէ, որքան չեն եղել նախկին կառավարութիւնները: Այդ ենթադրութիւնը միայն մասամբ ճշմարիտ է: Ֆրանսիական պարլամենտական սովորութիւնները շատ են զանազանվում անգլիականից և ոչ մի Ֆրանսիական մինիստր չէ կարող նոյնքան անկախութեամբ կառավարել երկիրը, ինչպէս Գլադստօն կամ Բիսմարկը: Անգլիայում Անգլիական առաջին մինիստրը կառավարում է պարլամենտը և պատահական մեծամասնութիւնից պաշտօնանկ չէ կարող լինել: Ընդհակառակը նա իր ձեռքին մի զօրեղ գէնք ունի, որ ստիպում է համայնքների ժողովին պաշտպանել կառավարութեան առաջնորդին, այդ գէնքը պարլամենտի արձակման իրաւունքն է, որին շատ անգամ դիմել են անգլիական առաջին մինիստրները: Երբ անգլիական կառավարութիւնը գտնում է, որ պարլամենտի տրամադրութիւնը չէ համապատասխանում հասարակական կարծիքին, նա արձակում է պարլամենտը և դիմում է ընտրողներին նոր պարլամենտ կազմելու համար: Գլադստօն և Բիսմարկի շատ անգամ այդպէս են վարվել և դա պարլամենտական ինտրիգների և ժամանակաւոր մեծամասնութեան կազմվելու առաջն նպատակ էր: Անգլիայի մէջ այն կուսակցութեան առաջնորդը, որի գործակի տակ ընտրութիւնների ժամանակ յաղթութիւն է ձեռք բերվել,

կատարեալ իշխանութիւն, ունի և այդ իշխանութեանը անկարող է զննակ պարլամենտի տրամադրութեան պատահական փոփոխութիւնը, մինչդեռ Ֆրանսիայի մէջ ամենազօրեղ մինիստրութիւնը, ինչպէս Գլադստօնի մինիստրութիւնը, պաշտօնանկ է լինում պատգամաւորների պատահական անբարեկամող վճռի շնորհիւ: Ֆրանսիական մինիստրները ժողովրդի ներկայացուցիչների կամքի կատարող գործիչներ են, աւելի ոչինչ: Նրանք չեն կարող բողոքել պարլամենտի գուցէ և անհրաւար լծիւնների դէմ, նրանք միայն հեռանալ կարող են: Պարլամենտի արձակելը կարելի է միայն բացառական դէպքերում, երբ այդ գործը թղլ էր տան սննատը և հանրապետութեան նախագահը, բայց և այդ միջոցը ժողովրդի և նրա ներկայացուցիչների բարձր իրաւունքների դէմ է համարվում: Առիթ կայ ենթադրելու, որ մինիստրականապահ զրութիւնը Ֆրանսիայի մէջ նման կը դառնայ անգլիական առաջին մինիստրի դրութեանը, երբ իշխանութիւնը Գամբետային ձեռք կանցնի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Լուրերից լրագիրներին հեռագրում են հոկտեմբերի 19-ին հետեւեալը. Գրապչիլում, Մէյոյի կոմսութեան մէջ, ուրբաթ օր Կոփի ծագից պօլիցիայի և ազգաբնակչութեան մէջ յօգուտ աղքատների հարկ հաւաքելու պատճառով: Ամբոխը քարեր էր գցում պոլիցիականների վրա, որոնք ստիպված էին դէմք գործ դնել: Մեծ բազմութիւն մարդկանց վիրաւորված է, բայց աւելի շատ կանայք:

— Լրագիրներին հեռագրում են Բերլինից: Պրոֆէսոր Ալբրիխտ Վալդեր, որը խայտառակ կերպով յաղթեցաւ չորս ընտրողական շրջաններում, լրագիրներում աշխատում է ապացուցանել, որ ինքն բուրժուական սոցիալիստ չէ և հակառակ չէ անշարժ սեփականութեանը քաղաքներում: «National Zeitg.» լրագիրը խիստ կերպով ծաղրում է պրոֆէսորի ուշացած փորձերը պարզելու իր մտիկ հայեացքները:

— Վիեննայից լրագիրներին հեռագրում են հետեւեալը. Իտալական թագաւորը ընդունեց ընդհանուր կայսրութեան մինիստրութեան բոլոր անդամներին, և նոյնպէս մինիստր-նախագահ կոմ Զապֆէլն, աւստրիական մինիստրների հետ և ունգարական կաբլինտի այն անդամներին, որոնք Վիեննա էին գտնվում: Գէպրետիս և Մանչինի մինիստրները, Բիսմարկի քարտուղարի հետ այցելութիւն տուին արտաքին գործերի մինիստրութեան կառավարչին, բարոն Կալլաուսին, և մէկ ամբողջ ժամ խօսում էին նրա և կոմս Վոլֆենշտէյնի հետ: Իտալական թագաւորը ընդունեց նոյնպէս Ֆրանսիական դեսպան կոմս Գիւլաւտէլին և սերբիական դեսպան Էրիտալիչին: Կոմս Գիւլաւտէլ վերադարձաւ Վիեննա, իր կառավարութեան յանձնարարութեամբ իտալական թագաւորի այցելութիւնը կայսրին շնորհաւորելու համար, այցելութիւնը, որի մէջ Ֆրանսիական հանրապետութեան կառավարութիւնը լուսնում է նոր գրաւական ցանկացած խաղաղութեան:

— Աւստրիական լրագիրները հաղորդում են, որ աւստրիական կայսերական պատգամաւորութեան զանազան կուսակցութիւնները հոկտեմբերի 27-ին միացան Նիստը սկսվելուց առաջ, նախագահ ընտրելու համար: Նախագահ ընտրվեցաւ Եմերլինգ, իսկ փոխ-նախագահ ընտրվեցաւ կոմս Զօնենվարտ: Իր առաջին ճառի մէջ բարոն Եմերլինգ բաւականութեւն յայտնեց խաղաղութեան յարաբերութեան առիթով, որը վաշելում է Աւստրիան: Խօսելով յեղափոխականների դաւադրութիւնների մասին, նա ասաց, որ ամեն մարդ, որի մէջ չէ մեռել արդարութեան և մարդասիրութեան զգացմունքը, պարտաւոր է պաշտպանել եւրոպական կառավարութիւններին կուսակցայէ չարիքի դէմ: Հակա-սեմիտական շարժման առիթով նախագահը նկատեց, որ Աւստրիան այդ դէպքում գնում է օրինական ճանապարհով, որ աւելի յուսալի է, քան թէ աներ կողոպտելը և բնակիչներին աքսորելը:

Եմերլինգ խօսեց նոյնպէս այլ երկիրներում ներկայի հակապարլամենտական ուղղութեան մասին, որը Աւստրիայում բոլորովին չը կայ, որովհետեւ Աւստրիայի սահմանադրութիւնը իր միապետի ազատ կամքով է շնորհված, և սերբութեամբ յարգվում է նրանից: Այդ ճառը բոլորին զարմացրեց: Չը խօսելով նրա ճառի այն մասի վրա, որը ուղղված էր Նիժիլիստների դէմ, Եմերլինգից չէին սպասում այդպիսի ոչ-ազատամիտ հայացք հակահեղական շարժման վերաբերութեամբ:

— Լրագիրները հաղորդում են, որ բոլորական ազգային լուսաւորութեան մինիստրը, Կոնստանտին Խիչէկ, Վիեննա դնաց Բոլզարիայի համար պրոֆէսորներ հրաւիրելու: Բուլիական կառավարութիւնը Սօֆիա ուղարկեց Աթենքի իր ներկայացուցչին դռնապանի ճարգի վերաբերութեամբ բոլորական կառավարութեան հետ բանակցելու համար:

— Գերմանական լրագիրները հաղորդում են, որ 397 ընտրութիւններից 395 վերջնականապէս յայտնի են: Ընտրված են քառասուն և չորս պահպանողականներ, կայսերական կուսակցութեան քսան և երկու կանգիդատ, կոնստանտին կուսակցութեան հարիւր կանգիդատներ, երեսուն և մէկ ազգային ազատամիտներ, երկու ազատամիտներ, քսան և չորս սեցեսիստներ, երեսուն և հինգ պրոգրեսիստներ, ժողովրդական կուսակցութեան երեք կանգիդատներ, տասն և հինգ լեհացիներ, տասն և երեք պարտիկուլարիստներ, վեցներ և բողոքի կուսակցութեան կանգիդատներ, և երկուս, որոնց պատկանելը մի որ և է կուսակցութեանը դեռ ես որոշված չէ: Հարկը կրկնաբար արկութիւններ կը լինեն:

— Բերլինի լրագիրները հաղորդում են հետեւեալը: Ընտրողական տեղից յետոյ կատարեալ հանգստութիւն է տրուում: Կուսակցութիւնները հաշուում են իրանց ուժերը, կարգի են բերում իրանց հաշիւները և պատրաստվում են կայանալի պարլամենտական սեսիայի համար: Կուսակցութիւնների կազմակերպութիւնը պատգամաւորների ժողովի մէջ մօտաւորապէս իր առաջվայ ձևը կը պահպանէ և նրա մէջ կառավարչական ոչինչ մեծամասնութիւն չի լինի, այնպէս որ իշխան Բիսմարկի վերանորոգական նախագիծը կը մնան նրա կանցելարիական պօրտֆէյլի մէջ: Հարկերից աւելի պատգամաւորներ պատկանում են վեհադեպի ընդդիմադրութեանը, իսկ մնացածներից ամենաբազմաթիւ կենտրոնի կուսակցութիւնը, չի պաշտպանի կառավարութեան անտեսական քաղաքականութիւնը: Այդ արդէն պարզ երևում է այդ կուսակցութեան օրգանները:

— Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ Գամբետային նոր մինիստրութիւնը, երեւի, նոյնեղների 10-ից վաղ կը կազմվի: Պատգամաւորների ժողովի առաջին նստումը ձայներ տալու ժամանակ, աշխույժմաններից մօտ 20 անդամներ միացան Գամբետային կուսակցութեան հետ, որ ստիպեց նրան ընդունել մինիստրական պաշտօնը: Եւրոպայից ձայն կուղւր, որը իր բաժնի նախագահ ընտրեց Լուի-Բլանին, իսկ փոխ-նախագահ Բարոզէլին, քաղաքական գրութեան մէջ է գտնվում: Նրա անդամներից աւելի չափաւորները դիտաւորութիւն ունեն բաժանվել նրանից, այնքան համարձակ ուղղում են գործել արմատականները: Մարսելի նոր պատգամաւոր կլովիս Գիւլ արդէն ստորագրութիւններ է հաւաքում մինիստրներին դատի ներկայիցը առաջարկելու համար, որին պաշտպանում է Կլեմանսո:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՈՅ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 28 հոկտեմբերի: «НОВОЕ ВРЕМЯ» լրագիրը լուր է հաղորդում, որ պետական խորհրդին կառաւարկվի մի օրինագիծ, որ կորոշէ մանուկների աշխատանքի ժամերը գործարաններում: Օրինագիծը համեմատ 14 տարեկանների համար օրական 8 ժամ աշխատանք է որոշվում, եթէ ցերեկը լինի, իսկ եթէ գիշերը 4 ժամ: 12 տարեկան հասակից փոքրերին աշխատանքը արգելվում է: «НОВОСТИ» լրագիրը հաղորդում է երկրագործական բաժնի կազմել և կանոնադրութիւն դիւղատնտեսական օրինակելի ուսումնարանների: Այդ կանոնագրի համեմատ իւրաքանչիւրը կարող է այդպիսի ուսումնարան բանալ բաժնի թոյլտուութեամբ:

Խմբագիր—Հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՔՐՈՒՆԻ

73-100